ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ _____ « _____ » _____ 2019թ.

Երևանի քաղաքապետ
պարոն Հ. Մարությանին

Հարգելի պարոն Մարության

Երևանում 20-րդ դարի 70-80-ականներին կառուցված բնակելի արվարձանների սահմանափակ տարածքում՝ թաղամասում, տեղավորել են մի քանի ուսումնական հաստատություններ՝ նախադպրոցական և հանրակրթական: Յուրաքանչյուր հաստատությանը (դպրոց, մանկապարտեզ), շենքից բացի, տրամադրվել է և որոշակի հողակտոր՝ հաստատության շրջակայքը կանաչ գոտի դարձնելու, հաստատության գործունեությունից բխող մարզամշակութային, խաղային գործունեության համար: Ուսումնական հաստատությունները ցանկապատել են իրենց կցված տարածքները, «կղզիացել» ոչ միայն հարևան ուսումնական հաստատություններից, այլև բնակիչներից, բնակավայրից, թաղամասից՝ դառնալով անհաղորդ: Թաղամասի բնակիչն այդ տարածքներն իրենը չի համարում և որևէ պատասխանատվություն չի զգում դրանց նկատմամբ: Ինչպես նաև ուսումնական հաստատությունները իրենցը չեն համարում իրենց կցված տարածքից դուրս մնացած տարածքները, շրջակա միջավայրը: Արդյունքում հանրային տարածքները՝ բնակելի և ուսումնական, աղճատվում են, ոչ նպատակային օգտագործման են դառնում, անմշակ են մնում համայնքային հողակտորները, միջշենքային, միջթաղամասային անցումները դառնում են ոչ ներառական, ոչ մատչելի բոլորին: Հաստատությունների շենքերի պահպանությունը, հողամասերի խնամքի, ոռոգման, լուսավորության, անցումների խնդիրների մեկուսի լուծումը առաջացնում են նոր խնդիրներ՝ այդպես էլ առայժմ չհաղթահարված:

Նշված խնդիրները, դրանց լուծումները պահանջում են թաղամասում գործող ուսումնական հաստատությունները դիտարկել միասնական տարածքում՝ կրթական պարտեզում, առանց ցանկապատերի, հարմար անցուղիներով՝ ինչպես հետիոտն, այնպես էլ

անվավոր: Ամբողջ տարածքի խնամքը կդառա ինչպես ուսումնական հաստատությունների, այնպես էլ համայնքի յուրաքանչյուր բնակչի խնդիրը: Կրթական պարտեզի ուսումնական հաստատությունը կարող է օգտագործել մյուս հաստատության հնարավորությունները:

Միգուցե հնարավոր է վերանայելու քաղաքաշինության նախարարի 2014թ. 103 հրամանի 41 կետը, որով սահմանվում է, որ «Հանրակրթական հաստատությունների տարածքները (հողամասերը) իրենց ողջ պարագծով պետք է ցանկապատված լինեն»: Անհրաժեշտության դեպքում հանրակրթական, նախադպրոցական հաստատությունները կարող են միավորվել քաղաքապետարանի ենթակայության տարբեր մակարդակների կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական համալիրների՝ ինքնուրույն գործող բլոկներով, որոնք կազմավորվում են առանձին միավորներով՝ մոդուլներով: «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի նախաձեռնությամբ մշակվել է «Կրթական պարտեզ բնակելի արվարձանում» նախագիծը, որը իր սխեմայով Երևանի քաղաքապետարանի և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի աջակցությամբ հատվածական իրականացվել է 2015թ.-ից: Մշակված նախագծով թաղամասի ուսումնական բոլոր հաստատությունները՝ դպրոցները, մանկապարտեզները, անկախ իրենց ենթակայությունից, հայտնվում են ամբողջական ներառական միասնական մի գոտում՝ մանկապարտեզների և դպրոցների տարածքներն ազատելով ցանկապատերից, բացելով և կառուցելով թաղամասի տարբեր մասերը իրար միացնող ճանապարհներ: Ինչպես նկատվում է կրթահամալիրը հետևողական ջանքերով բարեկարգել է իր դպրոցական-մերձդպրոցական տարածքները, ամբողջական ազատել դրանք ցանկապատերից, պատնեշներից, խարխլվող հենապատերից, կրթահամալիրի հողամասերում ստեղծել ոռոգման նոր ցանցեր, ստեղծել և խնամում է կանաչ լանջեր, պուրակներ, հեծանվային-հետիոտն անցումներ: Կրթահամալիրի բացօթյա տարածքները, այդ թվում՝ մարզահրապարակներ-խաղահրապարակներ, ուսումնական ագարակ, շուրջօրյա մատչելի են դարձել թաղամասերի բնակչության համար:

Ելնելով վերը նշվածից, ինչպես նաև կրթահամալիրի կողմից իրագործվող և նախատեսվող ծրագրերին տեղում ծանոթանալու նպատակով առաջարկում եմ կազմակերպել համատեղ տեղադիտում՝ Երևանի քաղաքապետի, քաղաքապետի տեղակալ Տ.Վիրաբյանի և Երևանի գլխավոր ճարտարապետի մասնակցությամբ:

Հարգանքով՝ **Ա.ՄԵՍՉՅԱՆ**